ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարչապետ

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Լևոն Խաչատրյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Հ. Աբրահամյան

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2010թ. մարտի 24

Ն – 338

52

Հ.Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
012-6337
29 03 10

00393

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

*24 մարտի 2010թ.*

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Լևոն Խաչատրյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկման համար գլխադասային նշանակել Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը:

Հ. Աբրահամյան

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

---


*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ*
*Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր*

Երևան, Բաղրամյան 19
հեռ. 588-288 | Գր. թիվ ՀՀ-014-003 | 23 մարտի 2010 թվական


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Նախագահ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 75-րդ և «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:

Կից ներկայացվում են՝

ա/ նախագծի ընդունման հիմնավորումը,

բ/ նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը և

գ/ գործող օրենքում փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Խնդրում եմ նշված օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
/014 ընտրատարածք/

Լ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մտից հ. 7/2-45
«23» 03 2010թ.
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Պ-855 – 24.03.2010-ՊԻ-010/0

ՆԱԽԱԳԻԾ

Հայաստանի Հանրապետության

օրենքը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 5-ի ընտրական օրենսգրքի 115-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ով.

«6.1 Կուսակցության ընտրական ցուցակներով ընտրված, բացառությամբ ցուցակի առաջին երեք համարների, թեկնածուների հասանելիք մանդատները տրվում են առնվազն մեկ տարի ժամկետով պարտադիր պատգամավորական գործունեությամբ զբաղվելու համար:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Ներկայացուցիչների պալատի ինստիտուտի բացակայության պայմաններում կապահովի բոլոր տարածաշրջանների ներկայացուցչությունը խորհրդարանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՀՀ Ազգային Ժողով, Օրենսգիրք N ՀՕ-284
ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (94-119 ՀՈԴՎԱԾՆԵՐ)
Ընդունվել է 05.02.1999
Ստորագրվել է 17.02.1999
Ուժի մեջ է մտել 28.02.1999

## ՀՈԴՎԱԾ 115. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ՝ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԵԼԸ

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրատարածքներում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների տվյալների հիման վրա, սույն օրենսգրքի 63.2 հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետում, ամփոփում է ընտրությունների արդյունքները եւ ընդունում հետեւյալ որոշումներից մեկը՝

1) Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին.

2) Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրությունները անվավեր ճանաչելու մասին:

Եթե նշված որոշումներից ոչ մեկը սույն օրենսգրքով սահմանված կարգով չի ընդունվում, ապա ընդունված է համարվում այն որոշումը, որին կողմ են քվեարկել առավել թվով հանձնաժողովի անդամներ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

2. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգի համար նախատեսված մանդատները բաշխվում են այն կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների միջեւ, որոնք ստացել են վավեր քվեաթերթիկների ընդհանուր թվի եւ անճշտությունների թվի գումարի համապատասխանաբար առնվազն՝ կուսակցության դեպքում՝ 5, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 7 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ: Եթե վավեր քվեաթերթիկների ընդհանուր թվի եւ անճշտությունների թվի գումարի համապատասխանաբար առնվազն 5 կամ 7 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել է ընդամենը մեկ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակ, ապա մանդատների բաշխմանը մասնակցում են հաջորդ երկու՝ համապատասխանաբար առավել ազգային կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները): Եթե Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով քվեարկությանը մասնակցում է մինչեւ 3 կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա մանդատների բաշխմանը մասնակցում են բոլոր կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները):

3. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգի համար նախատեսված մանդատները բաշխվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջեւ՝ նրանցից յուրաքանչյուրին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին համամասնորեն: Յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվի հաշվարկը կատարվում է հետեւյալ կերպ. յուրաքանչյուր ցուցակին կողմ քվեարկված քվեաթերթիկների տրված ձայների թիվը բազմապատկվում է ընտրական ցուցակներին հասանելիք մանդատների թվով, արդյունքը բաժանվում է մանդատների բաշխմանը մասնակցող ընտրական ցուցակներին կողմ տրված ձայների ընդհանուր թվի վրա, եւ առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվերն են:

4. Մնացած մանդատներն ընտրական ցուցակների միջեւ բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Մնացորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է այն ցուցակին, որին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվն ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում հարցը լուծվում է վիճակահանությամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

5. Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներով ընտրված է համարվում այն թեկնածուն, որի հերթական համարն ընտրական ցուցակում փոքր կամ հավասար է տվյալ ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվին:

6. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրված թեկնածուին հասանելիք մանդատը, եթե նա ընտրվել է նաեւ Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով, տրվում է ցուցակի հաջորդ թեկնածուին:

7. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններն անվավեր են ճանաչվում, եթե ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

8. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով սահմանադրական դատարան կարելի է դիմել արդյունքների պաշտոնական հրապարակման պահից յոթնօրյա ժամկետում:

9. Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 10 եւ ոչ ուշ, քան 20 օր հետո, սույն օրենսգրքով սահմանված կարգով եւ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նույն կազմով, անցկացվում է վերաքվեարկություն:

(115-րդ հոդվածը փոփ. 03.07.02 ՀՕ-406-Ն, 19.05.05 ՀՕ-101-Ն, 22.12.06 ՀՕ-1-Ն օրենքներ)